

(Հին բարգամուրիւն)

թիւն, որով ժամանակաւ հաւատ նորա
 եւ վարուցն լաւակամութիւն եւ հաս-
 տատունն եւ հեզութիւն ծանօթ լինել
 կարասցեն. եւ այսպէս արժանի առաս-
 20 տուածային քահանայութիւնն կարծե-
 ցեալ ի մեծագոյն վայելեցցէ պատիւ,
 քանզի ոչ պատեհ է՝ ոչ զիտութիւն եւ
 ոչ բարեօք վարքն ընդունել թեթեւու-
 թեամբ եպիսկոպոս կամ երէց կամ
 25 սարկաւազ (առ) ձեռնադրել, քանզի
 այս իրաւապէս նորատունի կար-
 ձեցցի, վասն զի մանաւանդ եւ երջա-
 նիկ առաքեալն, որ հեթանոսացն եղեւ
 առաքեալ երեւի արգիլելովն վաղա-
 30 գոյն զկարգաւորութիւնն, քանզի եր-
 կայն ժամանակին փորձ զվարսն եւ
 զիւրաքանչիւր գործ եւ զկամս դիւ-
 րագոյն տպաւորել կարասցէ: Ամենե-
 քեան ասացին թէ՛ հաճոյ է նոցա եւ
 35 բնաւին ումեք (Թղ. 65ա¹) ոչ չըջել
 զայսոսիկ:

16 AI որով ժամանակաւ հաւատ նորա —
 17 G լալականութիւն EFH լաւս կամաւորութիւն
 18 CI կարասցին — 20 E-I քահանայութիւն
 D կարճեցեալ — 21 I եւ DG ի մեծագոյն F պատիւս
 23 BD բարեօք AI չունին՝ վարքն EFI ձեռնադրել
 26 C կարծեցի — 27 B-K երջանին AGI առաքեալ

(Շարունակելի):

**ՅՈՒՅՈՒ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱԾ
 Ի ԲՈՒԼԳՐԱԾ**

(Շարունակութիւն):

Թղ. 463բ¹. Մարերի Ա: Եւ Մայիս Ը:
 Տօն է որդւոցն Որոտմանն Յակովբայ եւ Յո-
 հաննու Աւետարանչին: Թղ. 464բ². Մար.
 Բ: Մյս. Թ: Յիշ. է Ս. Կուսին վարդենկայ:
 Թղ. 465բ¹. Մար. Գ: Մյս. Ժ: Վարք եւ
 յիշ. Ս. Հօրն Արսէնի: Յայսմ. վկայարանու-
 թիւն Սրբուհոյն Անտոնինեայ: Թղ. 466բ¹.
 Մար. Գ: Մյս. ԺԱ: Յիշ. է Ս. Մանկանցն
 Բեթղաճէմի: Յայսմ. վկայարանութիւն Ս.
 Թէոդորոսի: «Եւ յետ է. ամաց Նահատակու-

(Հ. Գաբրիէանի բարգամուրիւն)

զժամանակ միոյ միոյ կարգի աշտի-
 ճանացն, զի հնար լիցի գիտել եւ ճա-
 նաչել զհաւատսն եւ զվարուց եւ զբա-
 րուց լաւութիւն եւ զհաստատութիւն
 եւ զհեզութիւն եւ յորժամ աստուա-
 ծեղէն քահանայութեան արժանի հա-
 մարեցցի, վայելեցցէ ի մեծամեծ պա-
 տիւսն: Քանզի չէ ի դէպ եւ ոչ իմաս-
 տութեան եւ լաւութեան գործ՝ խառն
 ի խուռն եւ վայրապար ի դոյն հա-
 մարձակել՝ փութանակի ձեռնադրել
 եպիսկոպոս կամ երէց կամ սարկա-
 ւազ: Քանզի նմանագոյնս մատաղա-
 տունի համարեցցի այնպիսին, մա-
 նաւանդ զի երանելի առաքեալն, որ
 վարդապետն եղեւ հեթանոսաց, թուի
 թէ հրաման տայ չառնել ձեռնադրու-
 թիւնս փութանակի, քանզի փորձ
 երկայնաճիգ ժամանակաց կարող է
 զվարս զնացից իւրաքանչիւր բաւա-
 կանն ցուցանել: Ամենեքին ասեն թէ՛
 հաճոյ է նոցա եւ ամենեւին չէ արժան
 զայն խախտել:

— 29 F արգելովն I արգելելովն ABCDEFH արգելովն
 G արգելուցն I զկարգաւորութիւն — 30 G ժամանա-
 կին — 31 CDK զիւրաքանչիւր(ս) գործն եւ DK իւրա-
 գոյն CDGK զկամսն — 34 A չունին՝ եւ G հաճոյ
 թուեցան նոցա եւ — 35 F որ՝ չըջել:

Հ. Հ. ՈՍԿԱՆ

թեան սրբոյն ... Ելեալ ի վերապէն Ս. Գրի-
 գորիոս, գայր հասանէր բազում զօրօք յաշ-
 խարհն Կորնուաց, ի դաւառն սահալունեաց,
 ի յաւանն Սուրէմաշէն, զոր այժմ կոչեն դու-
 րէն: ... Եկեալ ի տեղին ուր էր տապան Ս.,
 շինեաց ի վերայ նշխարացն վկայարան յա-
 նուն Ս. Թէոդորոսի: Եւ է տեղին այն վանք
 մեծահռչակ, եւ միայնարան կրօնաւորաց՝
 մինչեւ ցայսօր...: Եւ... այն կոճն որ հե-
 ղաւ սուրբ արիւնն ի վերայ, զոր այժմ յայտնի
 տեսողաց, ի վանքն Գորգոր Ս. Թորոս կո-
 չեցեալ: Թղ. 468բ². Մար Ե: Մյս. ԺԲ:
 Յիշ. է վարուց Երանելոյն Գերմանիոսի
 Պատրիարքին: Յայսմ. վկայարանութիւն Ս.
 Սովկիմայ քահանային: Թղ. 469բ². Մար.

Զ: Մյս. ԺԳ: Վարք եւ յիշ. Ս. Եպիսկանու
 Կիւրացոյն: Թղ. 471բ¹. Մար Է: Մյս. ԺԴ:
 Վկ. Ս. Կուսին Գղերիկեայ: Յայսմ. տօն է
 Ս. առաքելոցն Յասոնի եւ Սոսիլատրոսի:
 Թղ. 472բ¹. Մար. Ը: Մյս. ԺԵ: Վկ. Ս.
 Իսիդորոսի եւ Յոհաննու: Յայսմ. յիշ. է
 վարուց երանելոյն Կողոնիոյ Յոհաննու եպիս-
 կոպոսին: Յայսմ. վկ. սրբուհոյն Միւռոպի:
 Թղ. 473բ². Մար. Թ: Մյս. ԺԶ: Տօն է Զա-
 կոպոսացն Աբղաւի եւ Աբղէշաւի, եւ ԺԶ.
 կոպոսացն Սրբաւի եւ Սրբէշաւի, եւ ԺԶ.
 քահանայիցն եւ Թ. սարկաւազացն...:
 Յայսմ. վկ. Բարդէշաւի, Սահակայ եւ Շմա-
 ւոնի: Յայսմ. վկ. Ս. Վարդանայ նահատա-
 կին՝ որ ի Բաղէշ քաղաքին: Թղ. 476բ².
 Մար. Ժ: Մյս. ԺԷ: Գիւտ Ս. Սաշին յԵրու-
 սաղէմ: Յայսմ. եմուտ Նոյ ի տապանն՝ հրա-
 մանաւն Աստուծոյ: Ինքն եւ որդիքն իւր եւ
 կին նորա: Թղ. 477բ². Մար. ԺԱ: Մյս. ԺԸ:
 Վկ. Ս. Սողոմոնի եւ Պամփիլի: Եւ Պամ-
 փալոնի: Թղ. 478բ¹. Մար. ԺԲ: Մյս. ԺԹ:
 Վկ. Ս. Յակինթոսի եւ Պատրիկոսի եպիսկո-
 պոսին: Յայսմ. վկ. Ս. Պատրիկոսի եպիս-
 կոպոսին: Յայսմ. տօն է Եսայեայ մարգա-
 րէին: Թղ. 479բ². Մար. ԺԳ: Մյս. Ի: Վկ.
 Ս. Ասիղայի եւ Թալիլայ բժշկին: Յայսմ. վկ.
 Ս. Յիզանդիլտոյ: Յայսմ. վկ. Ս. Թալիլայ
 բժշկին: Թղ. 480բ². Մար. ԺԴ: Մյս. ԻԱ:
 Յիշ. է Կոստանդիանոսի թագաւորին եւ մօր
 նորա Հեղինեայ: Թղ. 481ա¹. Մար. ԺԵ:
 Մյս. ԻԲ: Վկ. Թէոդիտոսի զինչվաճառին:
 Եւ է. կուսան կանանցն: Յայսմ. վկ. Ս. Կու-
 լութայ: Թղ. 483ա¹. Մար. ԺԶ: Մյս. ԻԳ:
 Վարք Ս. Յոհաննու Գրնեցոյն: Թղ. 485բ¹.
 Մար. ԺԷ: Մյս. ԻԴ: Յիշ. Մատին Առաքե-
 լոյն Պետրոսի: Քահանայ մի արժանաւոր
 զարդացեալ ամենայն առաքելութեամբ հայ
 ազգաւ, ի գաւառէն Կոկովոսայ, ի զեղջէն որ
 Բժայր կոչի, այսինքն Գումեր...: Թղ. 486բ².
 Մար. ԺԸ: Մյս. ԻԵ: Վկ. Ս. Բասիլիսկոսի
 եւ Թերապիոնի եպիսկոպոսին: Յայսմ. վկ.
 Թերապիոնի եպիսկոպոսին: Թղ. 487բ².
 Մար. ԺԹ: Մյս. ԻԶ: Յիշ. է վարուց Ս.
 Սիմէոնի Սիւնակեցոյն: Թղ. 489ա¹. Մար.
 Ի: Մյս. ԻԷ: Վկ. Ս. Թէոդորայ եւ Դիդիմայ
 եւ Դաւթի: Յայսմ. վկ. Ս. Դաւթի եւ Գոր-
 գենայ (Գնունեաց): Թղ. 489բ¹. Յայսմ. յիշ.
 է Աշոտայ Բագրատունոյ Հայոց թագաւորի:
 Սա առաջին թագաւորեաց յազգէն Բագրա-
 տունեաց: Թղ. 490ա¹. Յոհաննէս Զըմըշ-
 կիկն ի Զըմըշկաճակուց՝ հայ էր ազգաւ, եւ

էր ճորա ի տան թագաւորին Նիկիտոսայ
 յըստըմպօլ: Թղ. 490բ¹. Մար. ԻԱ: Մյս.
 ԻԸ: Վկ. Սրբուհոյն Եղիկոնիտայ եւ Մարու-
 թայի եպիսկոպոսին: Յայսմ. յիշ. վարուց
 Ս. Մարութայի: Թղ. 491ա². Մար. ԻԲ:
 Մյս. ԻԹ: Վարք եւ յիշ. Ս. Սահակայ:
 Յայսմ. վկ. Ս. Երեմիայի: Թղ. 492ա¹.
 Մար. ԻԳ: Մյս. Լ: Վկ. Յուստինանոսի Զօ-
 րավարին: Յայսմ. գիւտ նշխարաց Ս. Թա-
 դէոսի առաքելոյն եւ Սանդիտոյ կուսին եւ
 այլոց սրբոցն որ ընդ նոսա կատարեցան ի
 Քրիստոս: Թղ. 493բ². Մար. ԻԴ: Մյս. ԼԱ:
 Վկ. Ս. կուսանացն՝ Թեկղի եւ Մրմու: Թղ.
 494բ². Մար. ԻԵ: Եւ Յունիս եւ Հղիւրանի Ա:
 Աւուրս ունի Լ: Տիւն ԺԵ. Ժամ: Եւ զիշերն
 Թ. Ժամ: Վկ. Մարտիրոսացն Պետրոսի եւ
 Պողոսի, Անդրիասի եւ Դիոնիսիոսի: Եւ
 Քրիստինեա կուսին: Յայսմ. յիշ. է կոտո-
 բելոցն ի հայս, յանհաւատիցն Թուրքաց՝
 ի Դձ եւ Կէ (= 1018) թվականիս մերոյ:
 Զարթեալ աստուածային բարկութիւն մեծաւ
 սաստիւ...: Թղ. 495բ². Մար. ԻԶ: Յնս. Բ:
 Յիշ. է վարուց Մովսէսի Սաբիլի աւազա-
 կին: Յայսմ. Գործիքոսի եպիսկոպոսի: Թղ.
 496բ¹. Մար. ԻԷ: Յնս. Գ: Վկ. Ս. Լուկիա-
 նոսի եւ չորից մանկանցն: Ս. վկայն Քրիս-
 տոսի Լուկիանոս քուրմ էր կըոց... բնակէր
 արտաքոյ քաղաքին Նիկիմիդեայ: Կը յաջոր-
 դեն՝ քանի մը տողով՝ «Աստիւրոս եպիսկո-
 պոս» եւ «Մարկոս եւ Սոկիանոս»: Թղ.
 497ա². Մար. ԻԸ: Յնս. Դ: Յիշ. է վարուց
 երանելոյն Մետրոփանոսի: Գոմետիանոս
 Հոտայ թագաւորի եղբայրն՝ հաւատաց ի
 Քրիստոս...: Թղ. 498բ¹. Մար. ԻԹ:
 Յնս. Ե: Տօն է Փիլիմոնի Առաքելոյն: Սուրբ
 առաքեալն Փիլիմոն էր յՀԲ. աշակերտացն
 Քրիստոսի: Յայսմ. վկ. Ս. Կիւրենայ եպիս-
 կոպոսին: Թղ. 499ա¹. Մար. Ը: Յնս. Զ:
 Վկ. Ս. Կիւրղի եւ մօր նորա Աննայի:
 Թղ. 500ա². Մարգար Ա: Յնս. Է: Վարք
 երանելոյն Սուբիոսի Անապատաւորի: Սայ
 էր ի քաղաքէն Անդրապոլոյ... Վերջը՝ հա-
 մաօտիւ՝ Վկ. Ս. կուսանացն Սօսանայ եւ
 Շուշանայ: Թղ. 501ա¹. Մարգ. Բ: Յնս. Ը:
 Վկ. Ս. Թէոդորոսի Ստրատիոսի Արակլաց-
 ւոյն: Թղ. 502բ². Մարգ. Գ: Յնս. Թ: Վկ.
 Ս. Աղեքսանդրոսի եւ սրբուհոյն Անտոնի-
 նեայ: Յայսմ. վարք ազախնոյն Աստուծոյ
 Պեղիզեա պոռնկի: Թղ. 503բ². Մարգ. Դ:
 Յնս. Ժ: Վկ. Ողբիւնոսի եպիսկոպոսին՝ եւ
 աշակերտաց նորին եւ Բարբաշմենայ: Յայսմ.

ՎԿ. Ս. Եպիսկոպոսին Բարբառեանայ: Յայսմ.
 ՎԿ. Ս. Ակակիոսի: ԹՂ. 504բ². Մարգ. Ե:
 Յնս. ԺԱ.: ՎԿ. Ս. առաքելոյն Բառնարայ:
 Յայսմ. ՎԿ. Եւստաքէոսի Ս. առաքելոյն: ԹՂ.
 501ա². Մարգ. Զ: Յնս. ԺԲ: ՅԻԶ. Աւնո-
 փրոսի, և ևս ճգնաւորացն: ԹՂ. 506ա².
 Մարգ. Է: Յնս. ԺԳ: ՎԿ. Տիմոթէի քահա-
 նային: Յայսմ. ՎԿ. Ս. կուսին Ակիւլինայ:
 ԹՂ. 507ա¹. Մարգ. Ը: Յնս. ԺԴ: ՎԿ. Ս.
 Բրիտափորի շանազլիոյն և որոց ընդ նմա:
 ԹՂ. 508ա¹. Մարգ. Թ: Յնս. ԺԵ: ՅԻԶ. Վա-
 բուց Երանելոյն Թէոփանոսի և ամուսնոյն
 Պանսեմի: ԹՂ. 508բ². Մարգ. Ժ: Յնս.
 ԺԶ: ՅԻԶ. Վարուց Կիրակէի և Ուրբաթու:
 ԹՂ. 509բ². Մարգ. ԺԱ.: Յնս. ԺԷ: Տօն է
 Եղիսէի Մարգարէին: ԹՂ. 511բ¹. Մարգ.
 ԺԲ: Յնս. ԺԸ: ՎԿ. Ս. Դուլայի և Վոնիփա-
 տոսի Վկային: Յայսմ. ՎԿ. Ս. Վոնիփատոսի:
 ԹՂ. 512բ¹. Մարգ. ԺԳ: Յնս. ԺԹ: ՎԿ. Ս.
 Յովսեփայ նոր Վկային: ԹՂ. 513ա². Մարգ.
 ԺԴ: Յնս. Ի: ՎԿ. Ս. Երեց Եղբարցն Սա-
 մուէլի, Մանուէլի և Իսմայէլի: Ի սմին ա-
 ւուր ՎԿ. Ս. Զոսիմոսի: ԹՂ. 514ա¹. Մարգ.
 ԺԵ: Յնս. ԻԱ.: ՎԿ. Ս. Յուլիանոսի և որոց
 ընդ նմա կատարեցան: ԹՂ. 515ա². Մարգ.
 ԺԶ: Յնս. ԻԲ: ՎԿ. Ս. Թէոդորոսի արե-
 դային և այլոցն: ԹՂ. 516ա¹. Մարգ. ԺԷ:
 Յնս. ԻԳ: ՎԿ. Ս. Ղեւոնդեայ և Բ. ընկե-
 րաց նորին: Յայսմ. յիշ. է նահատակու-
 թեան տէր Ստեփաննոսի արքեպիսկոպոսին
 Սերաստիոյ, յամի ԸՃ. և ԼԶ. (= 1387)
 Թվականիս Հայոց...: ԹՂ. 517բ. Մարգ.
 ԺԸ: Յնս. ԻԴ: ՅԻԶ. Վարուց Տայասայ Պո-
 սեմի: ԹՂ. 518ա². Մարգ. ԺԹ: Յնս.
 ԻԵ: ՎԿ. Սրբուհոյ կուսին Փերոնեայ: ԹՂ.
 519բ¹. Մարգ. Ի: Յնս. ԻԶ: Տօն է սրբոյ
 առաքելոցն Շիղայի և Սիւղիանոսի և
 այլոցն: Յայսմ. Նահատակութիւն կաթու-
 դիկոսին Աղթամարայ: Զորբադան հայրա-
 պետն մեր գտէր Զաքարիայ, տեսալ նախա-
 շարն սատանայ: ... Այս եղև Յունիսի ամ-
 սոյ ԻԶ. և Ի Թվականիս Հայոց ԸՃ. և ԽԲ.
 (= 1393) ամին: ԹՂ. 520ա². Մարգ. ԻԱ.:
 Յնս. ԻԷ: ՎԿ. Ս. Զենոնի և Զինու: Յայսմ.
 ՎԿ. Սրբատոսէի քահանային, և Դեմետրիա
 սարկաւազին...: ԹՂ. 521ա¹. Մարգ. ԻԲ:
 Յնս. ԻԸ: ՎԿ. Ս. Ստաքէոսի և որդւոցն
 իւրոց, և դասերացն: ԹՂ. 521բ². Մարգ.
 ԻԳ: Յնս. ԻԹ: Կատարումն Ս. առաքելոցն
 զԻսաւորացն Պետրոսի և Պողոսի: ԹՂ.
 523բ¹. Մարգ. ԻԴ: Յնս. Լ: Տօն է Երկո-

տասան առաքելոցն Բրիտոսի: ԹՂ. 525ա¹.
 Մարգ. ԻԵ: Յունիսի Ա.: ՎԿ. Ս. անարծաթ
 բժշկացն. Կողմայի և Դամիանոսի: Յայսմ.
 ՎԿ. Ս. Կայինդոսի: ԹՂ. 525բ². Մարգ. ԻԶ:
 ՅԼս. Բ: Գիւտ պատուական տփին, յորում
 Եղեալ էր զԵրանելոյն Մարիամու աստուա-
 ծածնին: ԹՂ. 526բ². Մարգ. ԻԷ: ՅԼս. Գ:
 ՎԿ. Ս. Բիանարոսի և Սիւղիանոսի: Յայսմ.
 ՎԿ. Ս. Խոսրովու Գանձակեցոյն: ԹՂ.
 527բ¹. Մարգ. ԻԸ: ՅԼս. Գ: ՎԿ. Ս. Մերին
 Սիւղիանոսի: Եւ Բարբելայ Վարդապետին և
 ԶԴ. աշակերտացն: Յայսմ. ՎԿ. Ս. Պապի-
 լայ և Պողոսի և սրբուհի կանանցն, Բ.
 զըւերցն. Վաղէնտիայ և Թէոփայ: Ի սմին
 աւուր ՎԿ. Ս. Բարբելայ դպրին և ԶԴ. ա-
 շակերտաց նորին: ԹՂ. 528ա². Մարգ. ԻԹ:
 ՅԼս. Ե: ՎԿ. Ս. Յակիմիթոսի: Յայսմ. ՎԿ.
 Ս. Եւստաքէոսի Անկիւրացոյն: ԹՂ. 529ա¹.
 Մարգ. Լ: ՅԼս. Զ: ՎԿ. Ս. Սրապիտին:
 Յայսմ. ՎԿ. Ս. Պրոկղի և Իլարիոնի: Յայսմ.
 ՎԿ. Ս. Պերիզբինոյ և Ղուկիանու, Պրոմ-
 պիոյ...:
 ԹՂ. 530ա¹. Հրոտից Ա.: Եւ Յու-
 լիս է: ՎԿ. Ս. Պրոկպոսի: ԹՂ. 531ա¹.
 Հրոտ. Բ: ՅԼս. Ը: Պատմութիւն Ս. Դաւթի
 և Ռամանոսի: ԹՂ. 533ա¹. Հրոտ. Գ: ՅԼս.
 Թ: Կատարումն Ս. Թուամսու Եպիսկոպոսին
 Ընկիւղաց: ԹՂ. 533բ². Հրոտ. Դ: ՅԼս. Ժ:
 Սրբուհոյն Ազնասիայ: Յայսմ. ՎԿ. նոր
 Վկայիցն Մելքիսեդէի և Կարապետի: ԹՂ.
 534բ². Հրոտ. Ե: ՅԼս. ԺԱ.: Տօն է Մըն-
 դեանն Յովաննու Կարապետին: ԹՂ. 536ա².
 Հրոտ. Զ: ՅԼս. ԺԲ: Առիտոսի բժշկին:
 Յայսմ. ՎԿ. Ս. Կիւրղի Եպիսկոպոսին:
 Յայսմ. ՎԿ. ԽԵ. Վկայիցն: ԹՂ. 537ա².
 Հրոտ. Է: ՅԼս. ԺԳ: ՎԿ. Ս. Արղմսեհի
 Վկային: ԹՂ. 538բ¹. Հրոտ. Ը: ՅԼս. ԺԴ:
 Պատմութիւն Ս. Բազարատայ Եպիսկոպո-
 սին: ԹՂ. 541բ¹. Հր. Թ: ՅԼս. ԺԵ: ՎԿ.
 Ս. Յուլիտայ և որդւոց նորա Կիրակոսի:
 ԹՂ. 542ա². Հր. Ժ: ՅԼս. ԺԶ: ՎԿ. Ս. ճգնա-
 ւորացն Կողբի և Պատերմութի և Աղեք-
 սանդրոսի: Վերջը՝ քանի մը տող՝ ՅԻԶ.
 Մարիամու Մազդազէնացոյն: ԹՂ. 543ա².
 Հր. ԺԱ.: ՅԼս. ԺԷ: ՎԿ. Ս. Աթանազիեան
 Եպիսկոպոսին և Ժ. աշակերտացն: Յայսմ.
 յիշ. Ներսէսի Լամբրոնացոյն: Որ էր որդի
 մեծի իշխանին Օշնի՝ տեսուն Լամբրոնի՝ և
 այլ զաւատաց: ԹՂ. 544ա¹. Հր. ԺԲ: ՅԼս.
 ԺԸ: Ս. Կուսին Մարիանէ: ԹՂ. 545ա¹.
 Հր. ԺԳ: ՅԼս. ԺԹ: Վարք և յիշ. Ս. Հօրն

Դիտոսի: Կը յաջորդեն քանի մը տողով՝
 «Ոլիմպիլա, որ էր Ե կոստանդինուպոլիս» և
 «Սրբոյն Մարթայի, մօրն Սիմէոնի Սիւնա-
 կեցոյն»: ԹՂ. 545բ². Հր. ԺԴ: ՅԼս. Ի: ՎԿ.
 Ս. Թէոդորոսի Կիւրեղոյ Եպիսկոպոսին:
 Յայսմ. յիշ. է աղախնոյն Աստուծոյ Պրաս-
 կեա: ԹՂ. 546բ¹. Հր. ԺԵ: ՅԼս. ԻԱ.: ՅԻԶ.
 Վարուց Աղուաշ Սիմէոնին և Յոհաննիսի:
 Սրբայ էին Ե քաղաքէն Անտիօքայ...: ԹՂ.
 548ա¹. Հր. ԺԶ: ՅԼս. ԻԲ: ՎԿ. Ս. Գո-
 բանդիտոյ: Վերջը՝ քանի մը տողով՝ Ս.
 Ապօղոնիոսի... Ե Սարգիս քաղաքէ: ԹՂ.
 549ա¹. Հր. ԺԷ: ՅԼս. ԻԳ: ՎԿ. Ս. Փոկասու
 Եպիսկոպոսին: Յայսմ. ՎԿ. Ս. կուսին Բրիտ-
 աոնեա: ԹՂ. 549բ². Հր. ԺԸ: ՅԼս. ԻԴ: ՅԻԶ.
 է Ս. Ստեփաննոսի հայրապետին: Ս. Ստե-
 փաննոս՝ աշակերտ էր Մովսէսի Սիւնեաց
 Եպիսկոպոսին: Յայսմ. ՎԿ. Կիւրղոսի քահա-
 նային: ԹՂ. 550բ². Հր. ԺԹ: ՅԼս. ԻԵ:
 Նընջումն է Աննայի Յովակիմայ ծնողաց Ս.
 կուսին Մարիամու Աստուածածնին: Յայսմ.
 ՎԿ. Ս. կուսին Լուկիա: ԹՂ. 551ա². Հր. Ի:
 ՅԼս. ԻԶ: ՎԿ. Ս. Երմոնդեա քահանային: Եւ
 Պանդալեոնի բժշկին: ԹՂ. 552ա². Հր. ԻԱ.:
 ՅԻԶ. ՎԿ. Ս. Կալինիկոսի. և Թէոդե-
 աեա և որդւոց նորա: Ս. Վկայն Կալինիկոս
 էր հաւատով Բրիտոնեա...: Յայսմ. ՎԿ.
 Ս. Թէոդատեայ և Գ. որդւոց նորա: ԹՂ.
 553ա¹. Հր. ԻԲ: ՅԼս. ԻԸ: ՎԿ. Գօհա-
 բեանցն: ԹՂ. 554ա¹. Հր. ԻԳ: ՅԼս. ԻԹ:
 Տաւն է Տիտոսի Առաքելոյն: ԹՂ. 554բ². Հր.
 ԻԴ: ՅԼս. Լ: ՅԻԶ. Ս. հայրապետացն Գրի-
 դորիսեանցն և Պետրոսի: Ս. հայրապետն
 Գրիգորիոս՝ որդի էր Մազիստրոսի՝ որդւոյ
 Վասակայ: Յայսմ. փոխեցաւ առ Բրիտոս
 Վարդապետն Գէորգ, մեղրիկն Սեւանեցի...
 (քանի մը տող): ԹՂ. 556ա². Հր. ԻԵ: ՅԼս.
 ԼԱ.: ՎԿ. Ս. Ղեւոնդեանց քահանայիցն: ԹՂ.
 557բ². Հր. ԻԶ: Օգոստոս Ա.: ՅԻԶ. Մակա-
 բայեցոյն Եղիազարու քահանային, և Շա-
 մունեա և Է. որդւոցն: ԹՂ. 558բ². Հր. ԻԷ:
 Օգոստ. Բ: Գիւտ նշխարաց Ս. Ստեփաննոսի
 Նախավկային Բրիտոսի յԵրուսաղէմ քա-
 յաքի: ԹՂ. 559բ¹. Հր. ԻԸ: Օգոստ. Գ: ՅԻԶ.
 Վարուց Ս. Հօրն Դաղմատիոսի: ԹՂ. 560բ¹.
 Հր. ԻԹ: Օգոստ. Դ: ՎԿ. Ս. Սոփիա. և
 Երեց դասերաց նորա Պիտոսի, Ելպիսի,
 Ազապի, որ է հայերէն Հաւատ Յոյս Սէր: Եւ
 Սոփիան իմաստութիւն թարգմանի: ԹՂ.
 561ա². Հր. Լ: Օգոստ. Ե: Տօն է տապանա-
 կին: Յայսմ. յիշ. շնորհաց տէրն Ներսէսին

Կլայեցոյն: ԹՂ. 562բ¹. Աւելեաց Ա.: Օգոստ.
 Զ: Տօն է պայծառակերպութեան Բրիտոսի
 Աստուծոյ մերոյ: ԹՂ. 563բ². Աւել. Բ:
 Օգոստ. Է: Նահատակութիւն Ս. Վարդա-
 նանցն Ե պատերազմին Պարսից: ԹՂ. 566ա¹.
 Աւել. Գ: Օգոստ. Ը: Վարք և ՎԿ. Ս. Դոմե-
 տիանոսի ճգնաւորի: Յայսմ. ՎԿ. Ս. Մարի-
 նոսի: Սա էր Ե քաղաքէն Անարզարայ: ԹՂ.
 566բ². Աւել. Դ: Օգոստ. Թ: ՎԿ. Ս. Անտո-
 նիոսի: Եւ Վարք Միւռոնա Եպիսկոպոսին:
 Յայսմ. յիշ. Վարուց Ս. Եպիսկոպոսին Միւ-
 աոնայ: ԹՂ. 567բ². Աւել. Ե: Օգոստ. Ժ:
 Պատմ. Յովասափու և Բարդամու: Արդ Ե
 մարդ Եղանիլն Աստուծոյ բանին...: (Հաղիւ
 քանի մը տող. շարունակութիւնը կը պակսի
 վերջի թուղթերը ինկած ըլլալուն և հոս կը
 փակուի մատեանս:)
 ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Գլխաւոր յի-
 շատակարանը կը պակսի: Բազմաթիւ են սա-
 կայն փոքր յիշատակարանները, որոնք
 գրուած և Երաքանչիւր հատուածի (վկայա-
 բանութեան) վերջաւորութեան, գրեթէ իրա-
 բու նմանող միաձեւ բովանդակութեամբ,
 որոնցմէ կու տանք մի քանի հատ...:
 1. ԹՂ. 40բ. Զի և Ինձ Եղիլեոյս և մեղ-
 սամած զճողի և ստացողի գրոցս, մահ-
 տեսի Եղիլային, և կողակցուն մահտեսի լուս-
 թաթունին, և ծնաւդացն հաւրն ուսու-
 պէկին և մաւրն մահտեսի մարութային. և
 Եղբաւրն Արիստակէսին, և մեղաւոր զըջի
 Սարգսին և ծնողացն Գրիգորին և Հուրին,
 և ամենայն արեան մերձաւորացն, կարգա-
 ցողիս և լսողացն և որք ողորմեան ասն.
 ամէն:
 2. ԹՂ. 331ա². Ողորմեա ստացողի
 գրոցս, մահտեսի Եղիլային և կողակցուն
 մահտեսի լուսթաթունին և ծնողացն ուսու-
 պէկին և մահտեսի մարութային. և զճողի
 Սարգսին:
 3. ԹՂ. 404բ. Ողորմեա Բրիտոսս Աս-
 տուծ ստացողի գրոցս մահտեսի Եղիլային
 և կողակցուն մահտեսի լուսթաթունին և
 ծնաւդացն հաւրն ուսուպէկին և մաւրն
 մահտեսի մարութային և Եղբաւրն արնս-
 տակէսին և հաճի Արիստակէս տիրացուն,
 և մեղսամած զըջիս Սարգսին, և ծնողացն
 Գրիգորին և Հուրիին և ամենայն արեան
 մերձաւորացն:
 4. ԹՂ. 37ա (տարբեր զըջի). Ողորմեա
 ստացողի գրոցս մալգօջողի տէր յովհան-
 նէսին և իրիցուհւոյն կոհարին և դասերացն

մէջըմին, եաքութին, դմբութին, հլւրին, մէջէքին, կիւլին եւ ամենայն արեան մերձաւորացն. եւ անխմաստ զըջի սարգսին:

5. Թղ. 1ա. ի ճակատը՝ կնիք մը հաւկըթածեւ, եղբրքը դրուած՝ «Թաղ խորհուրդ Ս. Թաղ. Թաղի Ռոտոսթոյ», մէջտեղը՝ նոյնը թուրքերէն:

ԾԱՆՅՈՒԹԻՒՆ. Մատենիս կից կը դանուի ուրիշ ձեռագիր մատենէ մը ինկած թերթ մը, 41 x 26 սմ. մեծութեամբ, երկսիւն, բոլորգիր, 35 տողոց, իւրաքանչիւր էջին վրայ մէկական լուսանցադարձով: Կը ներկայացնէ ճաշոցի մը իժ. թերթին սկզբի զոյգ մը էջերը. ա. Յայտ աւուր մատենան աշակերտքն առ Յիսուս եւ ասն: Ով իցէ ի մէջ մեծ յարքայութիւն երկնից: (Մատթ. Աւետ., զԼ. ԺԷ.): — Բ. Շարթ. աւր Թաղէոս առաքլ.: Եւ Սանդխոյ կուսին:

29.

ԱԻԵՏԱՐԱՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ԿԻՒՄԻՒՐՃԻՆ

ԹՈՒՂԹՔ՝ 9: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 40 x 25: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն 30 x 20: — ՇՐՋԱՆԱԿՈՒԱԾ՝ դեղին հաստ գծերով: — ՆԻԻԹ՝ բուրբ հաստ եւ ողորկ: — ԿԱԶՄ՝ խաւաքարեայ, կանաչ քաւաքարեայ: Կողմի վրայ (առջինի)՝ կայ՝ արծաթեայ եւ ոսկեղծեայ խաչաքարի մը, իսկ միւս կողմին՝ Էյնգալու ոսկեգոծ արծաթեայ Յարութեան պատկեր մը՝ քանակազարդ: Անկիւնները արծաթեայ 4 սերովերներ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ պահպանուած: Թղթերուն վարի անկիւնները՝ նորոգուած քղթիկներով: — ԳԱՏԱՐԿ՝ չունի: — ԳԻՐ՝ երկարագիր: — ՋԱՐԳԱԳԻՐՔ՝ գլխաւորները 4, որոնք են սկզբնագիրք չորս աւետարանաց: — ՆԿԱՐՔ՝ քղ. 1բ, 3բ, 5բ եւ 7բ, որոնց կեղծումը փակցուած են չորս աւետարանիչներուն տպեայ պատկերները՝ ապա գունազարդուած՝ ընդօրինակողին կողմէ: Աւետարաններու չորս գլուխներուն վերեւ կը գտնուին 14 x 4 սմ. մեծութեամբ քանակիւն գեղեցիկ մանրանկարներ: — ԼՈՒՍԱՆՅԱՋԱՐԳՔ՝ չունի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՄԳՔ = 1843: — ՏԵՂԻ՝ Կ. Պալիս: — ԳՐԻԶ՝ Գրիգոր դպիր: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 1ա: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Կիւմիւրիցի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցոյն: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ Ձեռագիրս ցուցակագրած է Տիար Վ. Յարութեան:

Մատենան է՝ Աւետարան իւղաքերից: ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. (Թղ. 1ա). Սրբոյ Աւետարանիս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Գրեցաւ այս սուրբ իւղաքերից աւետարանս՝ ձեռամբ զբաւլաճառ մահտեսի Արքայամի որդի երկուսասանամեա ծառայ ծառայից իբր տիրացու Գրիգոր դպիր: Յամի

Տեառն Փրկչին մերոյ: 1843 = ՌՄՂԲ Ի Կոստանդնուպոլիս:

2. (Ա. կողմին ներքին երեսին մէջտեղ փակցուած քանակուսի քղթի մը վրայ) «Յիշատակ է իւղաքերից Աւետարանս՝ Կիւմիւրիցի Սուրբ Լուսաւորիչ Եկեղեցոյն՝ զոր ետ կտիրենցի Սարգսի օղլու Սարգսի մահտեսի Գրիգոր աղայն, սակս հողոց հանգուցելոցն իւրոց»:

30.

ՅՈՒՌՈՒԹ-ԳԻՐ

Ի ՊԱԶԱՐՋԻԿ

ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆ՝ 2.70 սմ. եւ ԼԱՅՆՈՒԹԻՒՆ՝ 7 սմ., առնուած դեղին շրջագծի մէջ: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած: — ԳԻՐ՝ նորագիր: — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱԻՌՈՒԹԻՒՆՔ՝ կարմիր մեղանով: — ՆԿԱՐՔ՝ մէկ: Կը ներկայացնէ շրջանակի մէջ առնուած բազմաբանց չորս բարդանկեր, ընդհուրդալ եւ զարդարուն: Մէջը խառն ի խառն անուններ: Միջակ գործ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՄԺԹ (= 1770): — ՏԵՂԻ՝ անյայտ: — ՏԵՐ՝ Մարգրիտ: — ԳՐԻԶ՝ Անթոնի Ամբակում: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ գլխաւորը՝ վերջաւորութեան: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Տիար Կարապետ Թագաւորեանի ի Պազարճիկ:

Գրութիւնս է Յուռուք-Գիր (Համայնի), որ կը բովանդակէ. 1. Հաւատով խոստովանիմ...

2. Նորին Գրիգորի Նարեկայ վանից վանականի աղօթքներէն երեք հատ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. («Հաւատով խոստովանիմ» վերջաւորութեան) Անհուն մարգասիւրութեամբ եւ ամենազօր կարողութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի պահպանութիւն հողոց եւ մարմնոյ. Մարգրիտ ծառայիս Աստուծոյ:

2. (Աւելի վար) Եղիցի միշտ օգնական եւ պահպան ամենայնից հաւատացելոց... եւ մանաւանդ զիւր փոքրիկ Մարգրիտ ծառայս:

3. (Վերջաւորութեան) Գրեցաւ Համայնիս ՌՄԺԹ (= 1770) Փետրուարի Բ.ին. եւ Անթոնի Ամբակումս զրեցի էս Հէմայիլս Մարգրիտին է ամէն. Հայր մեր որ:

31.

ԳԻՐՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի ՇՈՒՄԵՆ

ԹՈՒՂԹՔ՝ այժմ 10: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 37 1/2 x 24: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ սկիզբը երկսիւն, ընդհանրապէս

միասին, գանգան չափերով: — ՏՈՂՔ՝ խառն, միջին հաշուով՝ 42: — ՆԻԻԹ՝ բուրբ հաստ եւ ողորկ: — ԿԱԶՄ՝ կողք ինկած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ միջակ: — ԳԻՐ՝ նորագիր. վերջերը՝ շեղագիր՝ նոր գրիչներէ: — ՋԱՐԳԱԳԻՐՔ, ՆԿԱՐՔ եւայլն՝ չունի: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՄԷԵ (1826). մէկ մասը աւելի նոր: — ՏԵՂԻ՝ Շումէն: — ԳՐԻԶ՝ անյայտ: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Շումէնի Ազգ. վարժարանի:

Մատենան է տեսակ մը Յիշատակարան Շումէնի Աղղային վարժարանի հիմնարկութեան եւ Յուցակ նուիրուած եւ յանձանձուած գրքերու:

Թղ. 1բ. Ծանօթութիւն զհիմնարկութեան վարժարան(ի)ս Շումլուու՝ եւ զժամանակէ՝ եւ զպատճառաց սորին:

Թղ. 2ա. Յանկ պատճառացն առ ի լոյս ածման վարժարանս՝ ըստ անուանց եւ ըստ օժտաց իւրաքանչիւրոցն:

Թղ. 4ա. Կը յիշուին վարժարանին ուսուցիչները:

ԾԱՆՅՈՒԹԻՒՆ. Մատենիս կից գրուած է նաեւ ուրիշ Աստուածաշունչ մաւրենի մը պատկանող թուղթ մը՝ շեղագիր, 26 x 19 ծաւալով:

32.

ՀԱԻԱՔԱՅՈՅ

Ի ՇՈՒՄԵՆ

ԹՈՒՂԹՔ՝ 277: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 20 1/2 x 15 1/2 x 3: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին. 15 1/2 x 10 1/2: — ՏՈՂՔ՝ 20: — ՆԻԻԹ՝ բուրբ ողորկեայ: — ԿԱԶՄ՝ կողք ինկած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահպանուած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ եւայլն՝ չունի: — ՍԿԶԲՆԱԻՌՈՒԹԻՒՆՔ՝ կարմիր մեղանով: — ԳԻՐ՝ նորագիր՝ ընտիր: — ԳՐԻԶ եւ ՏԵՂԻ՝ անձանթ: — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ. ենթադրաբար՝ ժԹ. դարու սկիզբ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ չունի: քղ. 1ա՝ երկու տեղ կնիք՝ Ստեփաննոս Գեորգ երեցի 1852: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Տիար Յովհաննէս Ավարեանի ի Շումէն:

Մատենան է Հաւաքածոյ, ուր կան 44 հետաքրքրական պատմութիւններ հիւսուած թուրքերի մը կողմէ: Հայտատու թուրքերէն:

33.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ի ՊԱՂՈՎԳԻՒՆ

ԹՈՒՂԹՔ՝ 228 + 4: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 20 1/2 x 15,5: — ԹԵՐԹՔ՝ 17. Ա. Ժ. իւրաքանչիւրը 12—14 բուրբ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. 16 x 10 1/2: — ՏՈՂՔ՝ 23—24: — ՆԻԻԹ՝ բուրբ: — ԿԱԶՄ՝ — ՏԵՂԻ՝ անյայտ, կարմիր քաւիչի վրայ համակ արամուր. փայտեայ, կարմիր քաւիչի վրայ համակ արամուր:

ճաքապատ: Ներսի կողքը սպիտակ բուրբ: Ձեռագրին պահպանութեան համար սկիզբն ու վերջը դրուած են երկուական սպիտակ բուրբեր յաւելուածաբար: Կողմերն արտակարգ զոյգ մը նկարներ, որոնցմէ առաջինը կը ներկայացնէ Քրիստոսի Յարութիւնը, իսկ միւսը՝ խաչելութիւնը, երկուքն ալ առնուած զարդարուն լայն շրջանակներու մէջ: Կը բուրբի ձեռագրին բուն հին կազմը չըլլալ, հետեցնելով բուրբերու անհան կտրատումներէն: Ունի նաեւ զոյգ մը փակագրեր, նոյնպէս արծաթեայ: — ՄԱԳԱՂԱՄԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ հմտ. վարք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ թեւեւ ընդհանուր ամամբ գոհացուցիչ, բէւ ծամանակի ընթացիկն բաւական վնասուած են նկարներն ու որոշակի տոգունած՝ էջերէն մնաք, այդպիսիներէն կան եւ սրբագրուած ու լրացուած էջեր նոր գրէ (հմտ. քղ. 70ա եւայլն): Կազմուելու ծամանակ բուրբերը բաւական վնասուած են: Թղ. 172՝ Յովհաննէս նկարն ու աւետարանի սկիզբը մասամբ պատուած: — ԳԻՐ՝ բոլորգիր, բաւական սիրուն, սեւ մեղանով: — ՋԱՐԳԱԳԻՐՔ՝ ընդհանրապէս քաւիչագիր, ոչ շատ յաւելուած: — ՍԿԶԲՆԱԻՌՈՒԹ՝ կարմիր մեղանով: — ԽՈՐԱԳԻՐՔ 4, Աւետարաններու սկիզբը (քղ. 12ա, 71ա, 109ա, 172բ) հանդերձ մանրանկար լուսանցազարդերով, բազմազոյն եւ ոսկեղծ, միջակ: — ԿԻՍՍԱՆՈՒԹ՝ 10, Համարաբառ տախտակաց (քղ. 1բ—10): — ԼՈՒՍԱՆՅԱՋԱՐԳՔ՝ բազմաքիւ տվորական գործեր: — ՆԿԱՐՔ 4, ամբողջական էջերու վրայ՝ աւետարաններու սկիզբը, բազմաբանց բաւական յարու, բայց տեղ տեղ ներկերը քաւիչով, բաւական յարու, բայց տեղ տեղ ներկերը քաւիչով, բաւական յարու, բայց տեղ տեղ ներկերը քաւիչով: — ՏԵՂԻ՝ «ի գաւառիս հաղոնաց ի գեղ վարդեմայ»: — ԳՐԻԶ եւ ՄԱՂԱՂՈՂ՝ Տէր Յովհան: — ՍՏԱՅՈՂ՝ Մարուգէ արեղայ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ բազմաքիւ, գլխաւորն՝ քղ. 221բ—223ա: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պովղիսի Ս. Գեորգ Եկեղեցոյն:

Մատենան է Աւետարան: Կը բովանդակէ.

1. Թղ. 1բ—10ա՝ Համարաբառ տախտակներ:

2. Թղ. 12ա—70ա՝ Մատթէոս, Թղ. 71ա—107ա՝ Մարկոս, Թղ. 109ա—171բ՝ Լուկաս, Թղ. 172բ—221բ՝ Յովհաննէս:

3. Մագաղաթեայ պահպանակ՝ 2 սկիզբն ու 2 վերջաւորութեան, լայնքին ծալուած եւ կազմուած մատենիս հետ, իրականին մէջ 2 թուղթեր են, առնուած ուրիշ էին զըջագրէ մը: Մեծութիւնն է այժմ 27 x 19, երկսիւն, գրութեան մեծութիւնն 22 x 16, տողք 20, միջին Մեսրոպեան ընտիր երկաթագիր, պահպանուած, սեւ մեղանով: Սոյն պահպանակին մէջ բացի ուրիշ գրութեանէ մը կայ հետեւեալ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ (Թղ. Բ.). Աղաչեմ ես գորգ ոսկերիչս զսուրբ քահանայ

նայտ յիտատակի արժանի համարեալիք զիս
զմեղաւոր ծառայս եւ որդեկին իմոյ արշա-
տուիւն (արեւշատութիւն) հայցեցէք (եր-
կու բառ անընթեռնելի՝ կազմին հետ կտրուած
ըլլալով) . . . ողորմեսցի :

4. Թղ. 227ա—228բ. Ամենի Աղեկասն-
դրացոյ բազում աշխատութեամբ եւ ճշգրտիւ
փոյթ ի մէջ առեալ . . . :

5. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Գլխաւոր
յիշատակարան՝ թղ 221բ—223ա. Ձեր շնորհ
ի Հոգւոյն սրբոյ առանց ակնառութեան առա-
տապէս գեղեակ ի սեռս արամային որ զի թե-
պետ եւ հետեալ դտանին անուշալարուք
սակայն նա անտես առնելով զյանցանս եւ ա-
նարգել եւ անխափան ներգործեալ եւ ան-
պատճառ փրկութեան կամողաց զբարին
ուստի եւ այս իրի ճանաչողք վստահանան
պէսպէս իրաւք աշխատապէս շահատակեալ
ըստ հասանելոյ ի զարդ եկեղեցոյ. եւ ներ-
զարար բացայայտութեամբ զերախտին Աս-
տուծոյ կառուցանել ի մէջ եկեղեցւոյ ի
զուարճութիւն լսասիրաց եւ յիշատակ բարե-
գործացն ստանալ զաւակ ի Սիոն եւ ընտանի
ի վերինն Երուսաղէմ : Ուստի եւ ի զանազան
կերպարանս կարգելոյ յեկեղեցիս, եւ ոչ մի
ինչ յառաջանայ ի պէտս ստացողաց որպէս
զգիւրք աստուածային. եւ մանաւանդ աս-
տուածատա պատգամ աւետարանիս որ մինչ
ի կատարած իրեւ զփող հնչէ ի վերայ
բարձրաւանդակ բեմին զորոյ տնաւրենու-
թիւնն Աստուծոյ արեգակնապէս սփռեալ յո-
գիս տարիտողացն շահիմաստիցն զառատա-
ծաւալ աւետարանչացն : Չայս զմտաւ ածեալ
աստուածասէր եւ բարի ծնաւդաց յիշատակն
սրբազան եւ առաքինի լիակատար վարուք
կուսակրան վանական քահանայ՝ Մարուգէ
անուն կոչեցեալ, ստացալ զի զաստուածա-
խաւս սուրբ աւետարանս ի յիշատակ իւր եւ
ծնաւդաց իւրոց եւ ամենայն արգականացն
առաջնորդ ունելով զգանձս աստուածային
միջնորդ եւ բարեխաւս զուրբ աւետարա-
նիչան զտանել ողորմութիւն յաւուրն անե-
րեկի, ուր բանք սպառին եւ դործք թաղաւո-
րեն : Արդ ով սրբասնեալ քահանայք յորժամ
արժանապէս պատարագիք մերձեցեալ յաս-
տուածային խորհուրդն, յիշեսլէք առաջի
զենելոյն Քրիստոսի ասելով Տէր Յիսուս ողոր-
մեա հոգւոյ Մարուգէի կուսակրան արե-
զայի, ստացողի սուրբ աւետարանիս եւ
ծնաւդաց իւրոց հանգուցելոց ի Քրիստոս
նաեւ սրբազան քահ(ան)այից հարագատ եղ-

բարց սորա : Աւետիցն եւ վարդաւայ. եւ
քերց իւրոց, ընդ նմին եւ մեղապարտ զձողի
սուրբ աւետարանիս Յոհանայ անպիտան
կրանաւորի եւ ծնաւդաց իմոց հանգուցե-
լոց ի Քրիստոս : Բայց եղև զրաւ զբնութեան
սորա ի գաւառիս Խաղտեաց ի գեղ վարգե-
նայ, մերձ առ Հանաուիկ զղեկիս Բաբերդոյ
ի ստոյգ եւ ընտիր աւրինակէ որ կոչի Մուր-
դանեցի, զոր լեալ էր ի գանձատանէ թագա-
ւորացն Հայոց. ընդ հովանեաւ մաւրս լուսոյ
աստուածածնիս եւ սուրբ Լուսաւորչիս. եւ
տէր Յիսուս մեզ եւ ձեզ յիշողացտ առ հասա-
րակ ողորմեսցի յիւրում գալստեանն եւ նմայ
փա՛ռք յաւիտեանս ամէն :

Չաստուածասէր եւ զբարեպաշտ զար-
դիւնական եւ զհանճարեղ սր. Ծաննշահն եւ
զծնաւդս իւր եւ զբերս զհանգուցեալսն առ
Տէր. եւ զբարեպաշտ ամուսինն իւր զՏա-
լիթն եւ զԱստուածատուր զաւակն իւրեան
զմանրագոյն եւ զգեռաբոյս պատանեակս
հանդերձ զարմիւք իւրեանց, որ աւանական
եղին ի ծախս սուրբ աւետարանիս յիշեցէք ի
Տէր Յիսուս : Ընդ նմին եւ զհոգեւոր եղբայր
մեր զՊարսաւն եւ զհարագատ եղբայր իւր
զԱրսէնն եւ զաւակս իւրեանց յիշեցէք ի
Քրիստոս :

Թղ. 223ա. Պարսալ էջի վրայ՝ Յիշատա-
կարանիս կից՝ զրուած է նոր զրչէ մը՝
վարգախան ունի այժմ 115 տուն եւ Երկու
եկեղեցի : 1915 Յունիս 8 :

2. Թղ. 107բ. Նոյնպէս բուն զրչէն՝ մանր
տաներով. «Քրիստոս Աստուած քո սուրբ
չարչարանաւքո կամաւոր. եւ կենսաբեր Յա-
րութեամբոս, ողորմեա՛ հաւատարիմ եւ բա-
րեպաշտ ծառայի քո Յակովբայ եւ պարկեշտ
եւ հեղահայեաց ամուսնոյ իւրոյ, եւ ջնջեա՛
զձեռագիր յանցանաց նոցա եւ այնոցիկ՝ որ
հաւատով արդիւնացեալ են ի սուրբ աւետա-
րանս, եւ ողորմեա նոցա : Եւ ինձ մեղապարտ
եւ անարժան զրչի Յոհաննու եւ ծնաւդաց
իմոց :

Ընդ նմին եւ Գրիգորի միայնակեցի, եւ
արի եւ ժիր ճղնաւորի, եւ ծնաւդաց իւրոց
ողորմեա, աւա՛ղ զառն եւ անբարի աւուրցս» :

3. Թղ. 224ա (Տարբեր զրչէ). «Արդ ես
Մարուգէ արեղա ստացա զսուրբ աւետարանս
յարգար վաստակոց իմոց, ինել զաւակ ի
սիոնիս եւ ընտանի յերուսաղէմ, եւ խաւսա-
կից յաստուածային պատուիրանագրու-
թիւնսն, եւ զկնի ելիցն իմ յայսմ արտմական
հովտէս յիշատակ ինձ եւ իմոցն եւ ամենայն

նախնականաց : Արդ աղաչեմ զամենեւեան
զսուրբ հայրսդ եւ զեղբարսդ, որք աւարտիք
ի սմանէ ընթերցմամբ կամ դադարաւ,
յիշեսլէք յաստուածահաճոյ յաղաւթս ձեր
զՄարուգէ կրանաւոր, եւ զծնաւդսն իմ,
զհայրն իմ զնկիկին, եւ զմայրն իմ զԽաթիկն
եւ զեղբայրսն իմ զԱւետիքն եւ զԱստուածա-
տուրն, եւ զվարդանն, եւ զբոյրսն իմ, զՏա-
լիթն, եւ զԱղբարացն, եւ զՍիրամարբն. եւ
Յիշեսլէք եւ զպարոն Ծանին շահն եւ զԱս-
տուածատուր զաւակն իւր, այլ եւ զվարդա-
պետն իմ զՅոհանն, եւ զհոգեւոր եղբայրն իմ
զՄիսիքար, յիշեսլէք ի Տէր : Եւ որ զմեզ յիշ-
ման արժանի արնէք, յիշեալ լիջիք եւ Քրիս-
տոսէ Աստուծոյ մերոյ՝ որ է աւրհնեալ յա-
ւիտեան. այլ եւ զՄարգրիտն» :

4. Թղ. 224բ. Արդ ես Մարուգէ վանա-
կան արեղայ անարժանս ի կրանաւորաց,
ստացայ զսուրբ աւետարանս յիշատակ ինձ
եւ ծնաւդաց իմոց, որ ոչ ծախի սա եւ ոչ
զնի, եւ եթէ ոք յանդին ծախելով կամ զնե-
լով. նոյնիւս եղիցի . . . :

Աւելի վար՝ նոյն էջը՝ նոր զրչէ. «Ո՞վ,
մերձ Բաբերդոյ՝ քաղաքին եւ Լուսունք գե-
ղին Սուրբ Աստուածամնի վանքն կայ Հրա-
շալի : — Որ այս հրաշագործ սուրբ աւետա-
րանս անդանոր է զրեցեալ ձեռամբք սուրբ
վարդապետացն» :

Իսկ աւելի նոր զրչէ մը կու տայ ծանո-
թութիւն մը աւելի վեր. «այժմ Լուսունք
կամ Լուսահոնք զիւրը ունի 130 տուն եւ
2 եկեղեցի : 1915 Յունիս 8» :

5. Թղ. 225ա. (տարբեր զրչէ.) Նոյն-
պէս բոլորգիր. «Ձվերջի կազմաւ Սուրբ
Աւետար(ան)իս : Չաստուածասէր եւ զբարե-
պաշտ մանուկն՝ զԾամշատին ոսկէգործն :
Որ ետ վերստին նորոգել զցանկալի Սուրբ
աւետարանս : Մեծաւ յուսով՝ եւ եռալիս-
պահ կենաց իւր՝ եւ զաւակաց. եւ բարեխաւս
հոգոյ եւ մարմնոյ իւրոյ : Եւ յիշատակ ծնաւ-
դացն իւր՝ հաւրն եւ մաւրն եւ ամենայն ա-
րեան մերձաւորացն : Արդ որք հանդիպիք
սուրբ աւետար(ան)իս՝ եւ զրիս : Յիշեցէ՛ք
յաստուածահաճոյ աղաւթս ձեր՝ զոսկէգործ
Ծամշատին Բաբերդացին՝ եւ զծնաւդսն իւր :
Եւ զուրք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ
մերոյ որ է աւրհնեալ յաւիտեանս Ամէն :

Ընդ նմին՝ յիշեսլէք եւ զԱլեքսանդր քա-
հանայն. զորդի՛ նուրպէկ աղաին : Որ յոր-

ղորելով մասնակից եղև կազմութեան եւ
պայծառութեան սուրբ աւետարանիս :

Կազմեցաւ ցանկալի սուրբ Աւետարանս.
ձեռամբ՝ յողմեղկելի եւ անարժան՝ Արքաւ
կրանաւորի՝ եւ Պիտակ անուն վարդա-
պետի : Ի քաղաքիս Պաւնդոսի ի դրան սուրբ
Ամենափրկչի : Յիշողք զմեզ ի բարի՝ յի-
շեալ լիջիք առաջի Յիսուսի : Թվին. ՋԺԷ
(= 1468) եւ յամսեանն Յունիսի. եւ Հայոց՝
մեհեկի» :

6. Թղ. 225բ. (տարբեր զրչէ). «Ձվեր-
ջին ստացաւ սուրբ աւետարանիս զպարոն
Ծամշատինն աղաչեմ յիշել յաղաւթս ձեր ով
մանկուք սուրբ եկեղեցոյ : Որ ստացաւ զա-
ւետարանս ի հալալ արդեանց եւ յարգար
վաստակոց իւրոց, եւ բերեալ ի քաղաքս կո-
ղմիայ, որ արդ ասի Ղարասար. եւ եզ յեկե-
ղեցի սուրբ Աստուածամնին. յիշատակ իւր
եւ ծնաւդացն իւրոց՝ Ֆալարախինն, եւ
Հումա խաթունին. եւ կենակցին իւրոյ Կուլ-
քանին եւ ամենայն արեան մերձաւորաց
իւրոց : Եւ մի՛ ոք իշխեսցէ հանել զսուրբ ա-
ւետարանս ի դրանէ Սուրբ Աստուածածնիս՝
յիմոց եւ կամ յաւտարաց՝ իմէ անելով,
ծախելով կամ զրաւելով կամ այլոց բաշխե-
լով . . . » :

7. Թղ. 223բ. «ՁՍտեփաննու քահանայ
եւ զԱստուածատուր զաւակն իւր եւ զամու-
սին իւր զԲնիմուր եւ զԿեանք սոցա զԼուսարով
եւ զվաշիկ յիշեսլէք ի Քրիստոս Յիսուս» :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Թ. Գ. Հ(ինդիւն).
1917ին պատրաստած «Ընդհանուր Յուցակա-
գրութիւն Ս. Գէորգ Եկեղեցւոյ Անշարժ Կա-
լուածոց, Սրբազան Անօթից եւ Չանազան
Գոյից» Ձեռագիր Տոմարին մէջ, ցարդ հասած
մեծագիր 240 էջերու մէջ, ներկայ մատենիս
մասին կը գրէ (էջ 21, Թ. 20). «Աւետարան
Ձեռագիր, Արժաթագատ կողքերով, շուրջ
500 կրամ Առաջին Աստիճան արծաթով,
զրուած Յիսուսի թուին ՋԺԵ (917 [?]) եւ
ամսեան Յունիսի, Հայոց Մեհեկի, կազմուած
Պոնտու քաղաքի մէջ, նուիրուած ի վերջոյ
Կողմնիոյ . . . Ս. Աստուածածին Եկեղեցւոյ :
Արժէք՝ ոսկի լէվ. 1000» :

34.
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ
Ի ՍԱԼԵՇԳՈՎ

ԹՈՒՂԹՔ՝ 80 : Էջ՝ 154 : — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝
18 × 12½ × 1½ : — ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկաթե, մին
լսցն՝ 7 × 15՝ բուն գրութիւնը. միւսը՝ 2½ × 15՝ որ-

պէս լուսանցազրուքիւն: — ՏՈՂԻՔ՝ 27—28: — ՆԻՒԹ, քուրք՝ բարակ՝ յղկուած, լաւորակ: — ԿԱԶՄ՝ աբեւեխեան կաշեպատ, խաւաքարտեայ, ամուր: — ՄԱԳԱՍԹԵԱՅ ՊԱՆՊԱՆՍԻՔ՝ չուրի: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ շատ լաւ: — ԳԻՐ՝ ճորգիք, մանր եւ ընտիր: — ՍԿԶԲՆԱԳԻՐՔ՝ կարմիր մելամով: — ԶԱՐԳԱԳԻՐՔ, ԶԱՐԳԱՆԿԱՐՔ, ՆԿԱՐՔ եւայլն՝ չուրի: — ԺԱՄՆԱԿ՝ 1819: — ՏԵՂԻՔ՝ Կ. Պոլիս: — ԳՐԻԶ՝ Ալթնեան Պետրոս վարդապետ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 5բ—6ա (բնւմը), 1բ եւ Ա. Կողբին ներքին երեսը: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Տիար Խաչիկ Այտընեանի ի Սվիզիայով:

Մատենան է կանոնագիրք: Կը բովանդակէ.

1. Թղ. 2ա. **Կանխարանութիւն. Յաղագս օգտակարութեան Կանոնադրոց եւ մանաւանդ հարկաւորութեան նմին առ ամենայն հաւատացեալս, եւ եւս առ եկեղեցականս՝ քահանայս եւ առ եպիսկոպոսունս:**

2. Թղ. 3ա. **Աստանօր յայտնին հեղինակը զբոց կանոնաց: Թիւք նոցին կանոնաց ըստ կարգի զբեցելոց ի կանոնագիրս՝ զոր ունէի ի ձեռնին, եւ ժամանակագրութիւնը ըստ կարի գտեալ:**

3. Թղ. 4բ. **Աղղեցութիւն: Նշանակութեան անուանց յայբուրենական կարգս զորս կրճատ եղաք ի լուսանցս:**

4. Թղ. 6բ—7ճա. **Բուն կանոնագիրքը, բաժնուած՝ գլուխներու, այբուրենական կարգաւ. ստորեւ մի քանիները. ա. Թղ. 6բ. Ազատ լիցին եկեղեցականք ի հարկաց, եւ թէ իշխան ոք կամիցի առնուլ հարկս ինչ ի նոցանէ, զրկեսցի յօրհնութենէ եկեղեցւոյ...: Բ. Թղ. 14ա. Ի բաժակէն սրբոյ եւս մատուցանել պարտ է ժողովրդեան, ո՛չ թերացուցանել զսրբութիւնն: Գ. Թղ. 16ա. Գաղանաբեկի Ե. մասնէն մի մասն աղքատաց տալի՛ է, թէ ո՛չ Ա. ամ ապաշխարեսցէ...:**

5. Թղ. 7ճա. **Ի ՌՃ թուականին մերոյ Փիլիպպոս Կաթողիկոսն էջմիածնայ եւ Ներսէս Կաթողիկոսն Սոց հանդիպեալ միմիանց յերուսաղէմ խորհուրդ արարեալ ժողով արարին հանդերձ Աստուածատուր պատրիարքաւ Երուսաղէմի եւ զայլ եպիսկոպոսունս կոչեալ յայլ գաւառաց, եւ հաստատեցին ժԳ. կանոնս՝ որք են այսոքիկ...:**

6. Թղ. 7ճբ. **Ձեկուցումն ի վերջոյ: Յաղագս ինչ ինչ բանի գիտելի է:**

7. Թղ. 7ճբ եւ 80ա. **Առակ մը եւ բժշկական զեզ մը:**

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 5բ. Որ եմ ամենապատրաստ ընկալուչ եպարանաց գիտնոց եւ առաքինեաց, բայց խթանաբացից խորհացելոց ի խորշս խցից եւ խորշակիլի:

զեցեաց: Յակոբ դպիր Ամասիացի մահտեսի Գեորգեան ի 25 Սեպտեմբեր յամի 1800 եւ ՌՄՆԹ: Ի յԱմասիա:

Իսկ ի Թիւ Հայոց ՌՄՃԱ. (= 1802) եւ ի Յուլիսի 20 զաղափարեալ յիսկ զաղափարէ ձեռն Կարապետ դպրէ տիրացու Գեորգեան ի յօգուտ համայն աղղիս: Որ ի Միջագիւղն մայրաքաղաքին Կոստանդնուպոլսոյ:

Իսկ ի ՌՄԿԸ (= 1819) թուականին ի Հոկտեմբերի ժե. զաղափարեցաւ ի յերկրորդ զաղափարէ նախագրեցելոյ: Ձեռամբ ի վայելունն Երեմիայ Արքեպս. ի ձեռն որդւոյ Գրիգոր մեղսակիր արքայի Յակոբեան ի Միւրանութենէ Կիլիկեան Սրբոյ զահին:

Եւ երրորդապէս այժմ՝ զաղափարեալ յԱլթնեան Պետրոս վարդապետէ յաշակերտէ Տեառն եւ Տեառն Պողոս (ի Պեշիկզաշ): Աստուածարան Պատրիարզի. յամի Տեառն 1819 Դեկտեմբերի 13: Ի պատրիարքութեան Տեառն եւ Տեառն Պողոս բաղմերախտ Պատրիարզի: Ի Կոստանդնուպոլսոյն:

Պիտոց է այս՝ միշտ կիր առնուլ, եւ ոչ անգործ՝ երբէք թողուլ Տապար բաղմաց յամառելոց, Բահ եւ ցուցակ բարեաց զործոց, Որք յայցս գանձուց՝ զինքեանս զրկեն, Սորեալ զնան՝ յանչէջ զեհեն:

2. Ա. Կողբին ներքին երեսը (տարբեր գրչէ). **«Այս կանոնս որ էտուր ինձ տիրացու մահտեսի Պետրոս յարգի եղբայրս ի թղին Հայոց հաղար ութսուն եւ հինկ ամին (Թ) ամսեանըն մայիսին 17 օրին այն ամին որ իբրն զընաց ի սուրբ Երուսաղիմ Տէր Յիսուս իւր սրտին կարօտն տացէ Տէր Աստուած Սուրբ կարգին արժանիս արասցէ որ վայելումըն տացէ Աստուած կարգացողած ուղղութեամբ վարուք այժմույս կրթեցեալ եմ ուղիղ վարուք եւլս կըրթիմք ամենայն ժամ ուղիղ եւ ճշմարիտ վարուք պահել եւ դիտել որ եմ նըւաստ ծառայ տրուպըս տիրացու Սահակ Թամգառացի»:**

3. Թղ. 1բ. (տարբեր գրչէ). **«Սոյն կանոնաց զերբը կը նուիրէ Տիկին Բերսարէ Այտընեան Ռուսճուզի Ս. Աստուածամիջեկեղեցւոյն. յիշատակն արգարոց Օրհնութեամբ Եղիցի: Սահակ Քահանայ վարպետեան 1927 Յունիս 3 Շիշտօֆէն»:**

Կան եւ անկարեւոր ծանօթութիւններ՝ նոր գրչէ՝ ներկայ տիրոջ ընտանեկան ծնունդներուն մասին:

